ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Պրոֆ. Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Հնագիտության տեսակետից Հայաստանը բացառիկ տեղ է գրավում Սովետական Միության մյուս հանրապետությունների մեջ։

Հայաստանի հնագիտական արժեքների վրա ուշադրություն են դարձրել օտար և առանձնապես հայ հին մատենագիրները սկսած V դարից, որոնք իրենց երկերում այս կամ այն առնչությամբ հիշատակելով քաղաքների, ամրոցների, պալատների և տաճարների կառուցման, ավերման և վերանորոգման հանգամանքներն ու ժամանակը, նկարագրել են հուշարձանների հետ կապված դեպքերը։ Այդ բոլորը կարևոր նյութ են հանդիսանում հնագետի համար հնավայրերի ուսումնասիրության ժամանակ։

Սովետական կարգերի հաստատումից առաջ Հայաստանում հնագիտական ուսումնասիրություններ են կատարել մի խումբ հայ, ռուս և օտար գիտնականներ։ Դրանցից հիշատակության արժանի են Անդրկովկասի հնագիտության հիմնադիր Աղեքսանդր Երիցյանը, *գերմանացի սեպագրագետ* Լեհման Հաուպտը, *ֆրանսիացի հնագետ* Ժակ դը Մորգանը, *հայագետներ* Կարապետ Բասմաջյանը, Կարապետ Կոստանյանը, *բանասեր* Գալուստ Տեր-Մկրտչյանը *և ուրիշներ։*

Հին սերնդի մի խումբ ներկայացուցիչներ իրենց գիտահետազոտական աշխատանքները նոր թափով շարունակեցին Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո և պատրաստեցին գիտական աշխատողների նոր խմբեր Հայաստանի բարձրագույն դպրոցներում և գիտական հաստատություններում։

Այդ գործում առանձնապես աչքի ընկան հայ ճարտարապետության տեսության և պատմության նախակարապետ Թորոս Թորամանյանը, *որը չափագրությունների և բազմաթիվ աշխատությունների օգնությամբ պարզեց հայկական ճարտարապետության փոխհարաբերությունը եվրոպականի հետ։ Հին սերնդի՝ սովետական կարգերի օրով աշխատած հնագետների թվում պետք է հիշատակել նաև մեծ երախտիք ունեցող, հնագետ և ազգագրագետ* Երվանդ Լալայանին, *սեպագրագետ* Ասատուր Խաչատրյանին, *Երևան քաղաքի պատմության հիմնադիր* Երվանդ Շահազիզին, *մանավանդ Անի քաղաքի պեղումների բազմամյա ղեկավար* Նիկողայոս Մարին *և նրա աշակերտներ* Հովսեփ Օրբելուն, Աշխարհբեկ Քալանթարին, *լեզվաբան և սեպագրագետ* Գրիգոր Ղափանցյանին։

Նախասովետական շրջանում, բացառությամբ Անիի պեղումների, Հայաստանում ծրագրված պեղումներ չէին կատարվում։ Ն. Մարը Անին պեղում էր գլխավորապես հայկական համայնքներից ստացած դրամական միջոցներով, նրան գործակցում էին Թ. Թորամանյանը, Ա. Վրույրը, Ն. Բունիաթյանը, Տա-

ռազրոսը, Հ. Օրբելին, Ա. Քալանթարը և այլն։ Դամբարանների տեսական ուսումնասիրությամբ էր զբաղվում Ե. Լալայանը, աշխատելով միայնակ, Հայոց աղգագրական ընկերության անունից և նրա միջոցներով։ Գիտնականների կողքին կային նաև սիրողներ, որոնք պեղումներ էին կատարում, բայց համապատասխան կրթություն չունենալու պատճառով չէին կարողանում լուսաբանել իրենց իսկ ձեռքով լույս աշխարհ բերած առարկաները։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո 50 տարիների ընթացքում հսկայական աշխատանք է կատարվել հնագիտության բնագավառում Հայաստանի սահմաններում, որն իր մեջ ընդգրկել է մի քանի բնույթի գործեր։ Նախ հիմնադրվել են գիտական և ուսումնական հաստատություններ, որոնք հաշվառքի են ենթարկել հուշարձանները, կազմակերպել են նրանց պահպանությունը, բազմաթիվ տեղերում նորոգումներ են կատարել և բարեկարգել նրանց շրջապատը։ Հիմնադրվել են պետական և տեղական թանգարաններ, որոնց մեջ անվտանգ պահպանվում են մեր անցյալի մշակույթի նշխարները։ Գրվել և հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ ամփոփվել են հնագիտության ասպարեզում կատարված աշխատանքները։ Ընդարձակ ծավալի պեղումներ են կատարվել ավերակ քաղաքներում, հին դամբանադաշտերում և այլ հնավայրերում, որոնց ընթացքում ի հայտ են եկել ճարտարապետական հետաքրքիր կառուցվածքներ և տասնյակ հազարավոր հնագիտական կարևոր նշանակություն ունեցող առարկաներ։

Ա. ՔԱՐԵԴԱՐ

Մինչև սովետական կարգերի հաստատումը քարեդարի գոյությունը Հայաստանում հայտնի չէր։ Շատերը պնդում էին, որ Հայաստանը, ինչպես և Անդրկովկասը, մարդկային ցեղերով բնակված չի եղել քարեդարում։ Նույնիսկ քարեդարյան գործիքների գյուտերը վերագրվում էին ուշ ժամանակների կամ առնվում էին կասկածի տակ[1]։

Դրան հակառակ, դեռ անցյալ դարի կեսերից սկսած, Կումայրիի (այժմ Լենինական) և Երևանի մերձակայքի ավազահանքերում և այլ վայրերում հաճախ երևան էին գալիս չորրորդական շրջանի կենդանիների ոսկորներ. մամոնտի հսկա ժանիքներ, ատամներ, ողնաշարի ոսկորներ, աղդրի և սրունքի մասեր։ Մամոնտի ոսկորների հետ գտնվում էին նաև նախնադարյան ձիու (Equus caballus), ցուլի (Bos priscus, bison latifrons), քարանձավային արջի (Ursus spelaeus), փղերի մի քանի տեսակների (Elephas armeniacus, elephas primigenius, elephas trogonthesi) բազմաթիվ մնացորդներ, որոնց գոյությունը ապացույց էր այն բանի, որ նույն ժամանակներում մարդն էլ է գոյություն ունեցել Հայաստանում։

Քարեդարն ուսումնասիրող առաջին մասնագետը եղավ Սանդրո Սարդարյանը, որին և վիճակվեց բաց անել Հայաստանի քարեդարի հնավայրերից մի քանիսը և հիմնավորել առաջուց հայտնի եղածները որպես այդպիսիք։

Սարդարյանի հետազոտած առաջին հնավայրերը թեպետ արդեն հայտնի էին, բայց նրա որոնումներն ու մինչև 5 մետր խորությամբ կատարած պե-

[1] Jacque de Morgan, Mission scientifique au Caucase, Paris, 1889, t. I, էջ 2, նույնի՝ Доисторическое человечество, М., 1926, էջ 47։

ղումները ի հայտ բերեցին քարեդարի տարբեր դարաշրջաններին պատկանող այնպիսի նյութեր, որոնց շնորհիվ Հայաստանում քարեդարի ուսումնասիրությունը առաջնակարգ տեղ գրավեց։

Հայաստանում նրա ուսումնասիրած հնավայրերից մեկը Արագած լեռան շրջապատն էր՝ Արտին լեռը, Սատանի դարը և Արեգունին։ Անցյալում ժակ դը Մորգանն այդտեղ էր գտել քարե գործիքներ։ Մյուս հնավայրը Արզնիի բարձրավանդակն էր, որտեղ երկրաբան Ալ. Դեմյոխինը 1935 թ. քարե գործիքներ էր գտել։ Սարդարյանը 1943—1949 թթ. հետազոտեց նաև մի քանի քարեդարյան այլ օջախներ՝ Արագածոտնում, Արարատյան դաշտում, Ախուրյանի հովտում և Հրազդանի միջին հոսանքի մերձակայքում։

Նրա գյուտերը, մանավանդ Արագածի շրջապատում հավաքած քարե գործիքները, բացառիկ նշանակություն ունեցան ողջ Սովետական Միության համար։ Այնտեղ գտնվեցին շելյան տիպի հնագույն քարե գործիքներ, որոնք մինչև այսօր էլ միակն են Սովետական Միության մեջ։ Այդ քարե գործիքները վեց հարյուր հազար տարվա հնություն ունեն[2]։

Սարդարյանը Սատանի գարում ի հայտ բերեց շելյան, աշելյան, մուստիերյան դարաշրջանի առարկաներ, Արզնիի բարձրավանդակում՝ աշելյան գործիքներ, Հրազդանի միջին հոսանքում՝ մուստիերյան մնացորդներ, Անի-Պեմզայում՝ մատլենյան մշակույթի մնացորդներ և նոր քարեդարյան առարկաներ՝ Արեգունիում, Անի-Պեմզայում, Մաշտոցի բլուրում, Կղզյակ բլուրում և այլ վայրերում[3]։

Սարդարյանը Արտին լեռան լանջերին ի հայտ է բերել քարե գործիքների պատրաստման արհեստանոցների մնացորդներ, որտեղ մինչև օրս պահպանվել են գործիքների թափոնները։ Այդտեղ կան նաև պատրաստելու ժամանակ խոտանված գործիքներ, ծղաններ, որ իբրև ավելորդ մասեր հեռացվել են պատրաստվող գործիքի վրայից։ Կան նաև գործածության մեջ եղած իսկական գործիքներ։ Գտնված առարկաների մեծագույն մասը օբսիդիանից են (հրաբխային ապակի), որի ստվար շերտերը բնական վիճակում գտնվում են նույն լեռան լանջերին, արհեստանոցներից քիչ վերև։

Այդ տեղերում է Հայաստանի նախամարդն առաջին անգամ հանքահանել իր ձեռքի գործիքների հում նյութը և իր արհեստանոցում մշակել և հարմարեցրել է գործածության։

Հայաստանի քարեդարյան հնավայրերում ուսումնասիրություններ կատարեցին նաև լենինգրադցի հնագետներ Ս. Ն. Զամյատնինը և Մ. Զ. Պանիչկինան 1946—1948 թթ. ընթացքում։ Նրանք Սատանի դարում ի հայտ են բերել ուշ շելյան, վաղ աշելյան և ուշ աշելյան մշակույթի մնացորդները և ուշ աշելյան և վաղ մուստիերյան առարկաներ Արզնիի բարձրավանդակում։ Բացի այդ, Նուռնուսում և Հրազդանում (Ճաթղրան) նրանք գտել են վերին պալեոլիթի մնացորդներ[4]։

---

[2] Դժբախտաբար Սարդարյանը շուտ դադարեցրեց հին քարեդարի ուսումնասիրությունները։

[3] С. А. Сардарян, Палеолит в Армении, Ереван, 1954, նույնի՝ Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967։

[4] М. З. Паничкина, Находки каменных орудий на Арагаце, «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՀ ԳԱ (հաս. դիտ.), 1946, № 5։ նույնի՝ Палеолит Армении, Ленинград, 1950։ նույնի՝ К вопросу о верхнем палеолите, «Տեղեկագիր» ԳԱ (հաս. դիտ.), 1948, № 7։ С. Н. Замятнин, Находки нижнего палеолита в Армении, նույն տեղում, 1947, № 1։

Հետագա տարիներին Ս. Բալայանը և Վ. Լյուբինը հետազոտեցին Հրազդանի հովիտը և մի քանի այլ վայրեր ու Ջրաբեր գյուղի մոտերքում գտան ուշ աշելյան քարե գործիքների արհեստանոց, իսկ Թալինում՝ վանակատից և անդեզիտից պատրաստած աշելյան և նրան հաջորդող մուստիերյան գործիքներ[5]։

Հնագետներից ոմանք անցյալում այն սխալ կարծիքին էին, որ Հայաստանը նոր քարեդար չի ունեցել և կամ նա շատ կարճատև է եղել, այն պատճառով, որ մետաղն այդտեղ շուտ է հայտնաբերվել և մտել գործածության մեջ, ուստի միջին քարեդարին անմիջապես հաջորդել է մետաղի դարաշրջանը։

Այժմ այդ տեսակետը հերքված է և Հայաստանում հայտնի են բազմաթիվ նոր քարեդարյան հնավայրեր, որոնց մեջ բնակվել է մարդը և թողել իր յուրահատուկ մշակույթի հետքերը։ Նոր քարեդարում դաշտային վայրերում ծնունդ է առել երկրագործությունը, իսկ լեռնային շրջաններում լայն ծավալ է ստացել անասնապահությունը։

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի քարեդարի ուսումնասիրությունը նոր փուլի մեջ մտավ։ 1967 թ. Հնագիտության և աղգագրության ինստիտուտի նախաձեռնությամբ մի գիտարշավ կազմակերպվեց (ղեկավար Հ. Ա. Մարտիրոսյան) Հայաստանի քարեդարյան քարանձավներն ուսումնասիրելու նպատակով, որին մասնակցում էին բացի հնագետներից նաև երկրաբաններ, հնէաբաններ, աշխարհագետներ, մանրէաբաններ, ինչպես նաև ճարտարապետ և նկարիչ։

Այդ արշավախումբը 1967—1968 թթ. ուսումնասիրեց Հրազդան գետի միջին հոսանքի քարայրները բավական ընդարձակ տարածության վրա և պարզեց, որ բացի նախապես արշավախմբի մասնակիցներից մի քանիսին ծանոթ անձավներից, կան բազմաթիվ այրեր, որոնց մեջ տևականորեն պատըսպարված է եղել հին քարեդարի մարդը սկսած ուշ աշելյան շրջանից։

Արշավախումբը մանրաղնին պեղման ենթարկեց «Երևանյան ծովակի» աչ ափին գտնվող խոշոր քարայրներից մեկը, որ կամարավոր ծածկույթ ունի։ Այդ քարայրն առաջացել է, ինչպես ենթադրում են, հրաբխային լավայի հետևանքով։ Վերին բազալտե պինդ ծածկույթը պահպանվել է, իսկ խարամով լցված միջուկը գետի ջրի հոսանքից լվացվել ու տեղում խոռոչ է առաջացել, որը և քարեդարի մարդուն ծառայել է իբրև պատսպարան։

Այդ քարանձավի մեջ պեղումների ժամանակ գտնվել են 20.000-ից ավելի քարե գործիքներ (ձեռքի հատիչներ, նետասլաքի և նիզակի ծայրեր, սրածայր գործիքներ, քերիչներ, բրիչներ, ատամնավոր կտրիչներ, կոկիչներ), միջուկներ և ցլեպներ։ Գործիքների և թափոնի այդ հսկայական կույտն ու գործիքների բազմազանությունը ցույց են տալիս, որ մարդն այդտեղ ապրել է երկար ժամանակ։ Շատ են նաև կենդանիների մնացորդները։ Գտնվել են ռնգեղջյուրի, իշայծյամի, եղջերուի, արջի, գայլի, աղվեսի, ցիռի, վայրի ձիու, ինչպես նաև թռչունների (աղավնի, մորեկ) և կրծողների ընտանիքին պատկանող կենդանիների ոսկորներ։

Ինչպես արդեն ակնարկեցինք, այդ քարայրում մարդը բնակվել է ռիսյան սառցային շրջանում, երբ մարդկությունն ապրում էր միջին հին քարեդարը

---

[5] В. П. Любин и С. П. Балаян, Новые находки культуры палеолита на вулканическом нагорье Армянской ССР, «ՀՍՍՀ ԳԱ Զեկույցներ», XXXIII, 1961, № 2. В. Любин, Верхне-ашельская мастерская Джрабер (Армения), КСИА, 1961.

(մուստիե), որն սկսվել է մոտավորապես 100.000 տարի առաջ և տևել է մոտ 50.000 տարի։

Բազալտե անջրաթափանց քարայրեր կան նաև Սևանա լճի շրջապատում և շատ այլ վայրերում, որոնք ուսումնասիրվելու են առաջիկա տարիներին։

Գիտարշավը մի քանի տարիների ընթացքում հսկայական նյութ տվեց Հայաստանի հնագույն ժամանակների պատմության համար և այժմ էլ շարունակում է իր գործը[6]։

Բ. ՊՂՆՁԵԴԱՐ

Մինչև ներկա դարի երեսնական թվականները պղնձեդարն իբրև առանձին դարաշրջան չէր ճանաչվում, այլ գտնում էին, որ նոր քարեդարին անմիջապես հաջորդել է բրոնզեդարը։

Սակայն աշխարհի տարբեր մասերում ի հայտ եկան քարեդարին հաջորդող այնպիսի մշակույթներ. որոնցում հիմնական գործիքները քարից են, բայց պղինձն արդեն ծանոթ է մարդուն և նրանից պատրաստում են միայն ասեղներ, հերուններ և զարդարանքներ։ Պղնձի գործածությունը, մինչև բրոնզի գյուտը, բավականին երկար է տևել և ունեցել է իր յուրահատուկ կողմերը. ուստի և այդ դարաշրջանը առանձնացրին և կոչեցին էնեոլիթ (պղնձեդար)։ Այդքանով հարցը չփակվեց։ Մինչև այսօր էլ վեճերը շարունակվում են պղնձեդարի բնույթի և տևողության մասին։

Հնագետների մի մասն այն կարծիքին է, որ մեր դարաշրջանից առաջ չորրորդ և երրորդ հազարամյակների ընթացքում մարդիկ պղնձին դեռևս անագ չէին խառնում և բրոնզ ստանում, որ անհամեմատ պինդ մետաղ է, քան թե պղինձը, այլ գործածում էին պղինձ, որ շատ ավելի թույլ է և շուտ փչացող։ Այդ պատճառով IV և III հազարամյակները պղնձի դար կոչեցին։

Հնագետների մի այլ խումբ էլ բրոնզեդարը հասցնում է մինչև երրորդ հազարամյակի կեսերը և մի քիչ էլ ավելի վաղ։ Սրանք բրոնզ են համարում այն պղինձը, որն իր մեջ մկնդեղի որոշ տոկոս է պարունակում։ Այս տեսակետին եղողները մոռանում են, որ բրոնզը որոշակի բաղադրություն ունի, նա լավագույն դեպքում 90% պղինձ է պարունակում և 10% անագ։ Մկնդեղի հետքերը հնագույն պղնձի մեջ մնացորդ են. այն ժամանակվա պայմաններում մաքուր պղինձ ստանալն անհնարին էր։ Եթե բացառենք «մկնդեղային բրոնզի» գոյությունը, պետք է ընդունենք, որ պղնձեդարը Հայաստանում ընդգրկել է IV հազարամյակի երկրորդ կեսը և III հազարամյակն ամբողջությամբ։ Այդ նույն ժամանակներին պատկանող պղնձեդարյան բազմաթիվ բնակավայրեր են բացվել և ուսումնասիրվել Հայաստանում։ Այդքան շատ հնավայրերի գոյությունը Հայաստանում ապացույց է այն բանի, որ մեր երկիրն այն ժամանակվա համար անսովոր խիտ բնակչություն է ունեցել։

Սովետական Հայաստանի սահմաններում պղնձեդարյան կարևոր հնավայրեր են համարվում Շենգավիթը (Երևան), Սև բլուրը, Մոխրաբլուրը (Էջմիածին), Թագավորանիստը (Կիրովական), Էլարը և այլն։ Պեղումները բացահայտել են, որ անգամ հին և միջնադարյան արքայանիստ մեծ քաղաքնե-

6 Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, Պատմա-բանասիրական հանդես, 1969, № 1, էջ 191—208։

րըն ու լեռնային ամառանոցները (Դվին, Գառնի) հիմնադրվել են պղնձեդարյան բնակավայրերի տեղում։

Պղնձեդարյան բաղմաթիվ բնակատեղիներ են բացվել նաև Արևմտյան Հայաստանի սահմաններում (Կարին, Կեսարիա, Սեբաստիա, Վասպուրական, Ալաշկերտ և այլն)։

Ամենից լավ ուսումնասիրված է Շենգավիթի պղնձեդարյան բնակավայրը, ուստի ստորև կանգ կառնենք միայն նրա վրա։

Շենգավիթի պղնձեդարյան բնակատեղին գտնվում է Երևանյան ծովակի ձախ ափին, մի բարձրադիր բլրակի վրա։ Քաղաքի ընդարձակման պատճառով այդ ամայի վայրը տրամադրվելու էր քաղաքային խորհրդին և այնտեղ շենքեր կառուցվելուց առաջ անհրաժեշտ էր հնագիտական հետախուզություն կատարել. այդ միջոցին էլ բացվեց հետագայում մեծ հռչակ հանած էնեոլիթյան բնակավայրը։

1936—1938 թթ. պեղումներ կատարեց Հայաստանի պետական պատմական թանգարանը և հուշարձանների պահպանության կոմիտեն (ղեկավար՝ Եվգ. Բայբուրդյան)։ Ի հայտ եկան չորս կացարաններ, որոնցից յուրաքանչյուրն իր կենտրոնում ուներ բոլորաձև մի սրահ 6—8 մետր տրամագծով, որին մի քանի կողմերից շրջապատում էին քառանկյունի սենյակներ։ Այդ շենքերը գրեթե անմշակ քարերից էին, իսկ վերին մասերը՝ հում աղյուսից կամ կավակերտ։ Բոլորաձև սրահներն իրենց կենտրոնում ունեին գետնին ամրացրած մի տափակ քար, որի վրա կանգնած է եղել սրահի փայտե կենտրոնական սյունը, իսկ նրա վրա նստած է եղել սրահի կոնաձև ծղոտե ծածկի բարձրադիր կենտրոնը։ Ծածկի փեշերը հենված են եղել գետնից մեկ մետր բարձրություն ունեցող բոլորշի պատերի վրա։

Այդ կլոր սրահներից յուրաքանչյուրի կենտրոնում, սյան պատվանդանի կողքին, ղետեղված էր մոտ 25—30 սմ բարձրությամբ բոլորակ մի օջախ, որի ներսը բաժանված է միմյանց հետ հաղորդակցվող երեք մասի։ Օջախներն ունեին 70—90 սմ տրամագիծ և զարդարված էին պղնձեդարին հատուկ ոլորաններով և ուռուցիկ այլ զարդերով։ Այդ օջախների զարդարված և սրահների կենտրոններում դրված լինելը ենթադրել է տալիս, որ նրանք բացի գործնական իմաստից ունեցել են նաև պաշտամունքային նշանակություն։ Օջախի պաշտամունքը, կապված կրակի և արևի հետ, երկար ժամանակ պահպանվել է Հայաստանում, որի մնացորդները հասել են գրեթե մեր օրերը։ Օջախը դարձել է տոհմի, գերդաստանի, ընտանիքի խորհրդանիշ։ Այդ կավակերտ օջախների նատաղարյան օրինակները թոնիրներն են, որոնք այնքան բնորոշ են Հայաստանի միջնադարյան բնակավայրերին։ Զարմանալի չէ, որ էջմիածնի տաճարի ավագ սեղանի տակին հեթանոսական մեհյանի կրակարանը իրենից մի թոնիր է ներկայացրել։ Ահա այդ թոնիրների նախնական օրինակն է, որ մարդը նստակյաց դառնալով, առաջին հերթին, իր սրրությունն է դարձրել և նրա մեջ պահպանել կրակը։

Բոլորաձև և քառանկյուն սենյակներում գտնվել են տնային կարասու բաղմաթիվ մնացորդներ՝ կավանոթներ, քարե աղորիքներ, որձաքարի գործիքներ՝ մուրճ՝ կոթառի անցքով, զուրզ, ձեռքի ծեծիչներ, օբսիդիանի դանակ, մանգաղի ներդիր մասեր, նետասլաքներ, ոսկրից պատրաստած տեղի, նետի, հերունի ծայրեր, ուլունք և այլն։ Այնտեղ գտնված է նաև մետաղ ձուլելու քարե կաղապար, որը մատնացույց է անում, որ պղնձի արդյու-

նագործությամբ հենց այդտեղ են պարապել և պղնձագործությունը տեղական է, մանավանդ որ հնագույն ժամանակներից հայտնի են եղել Հայաստանի պղընձահանքերը։

Մեծ և փոքր կավանոթները պատրաստված են ձեռքով, դուրգը դեռ հայտնի չէր, ամանների մեծ մասը սև գույնով են ներկված և լավ փայլեցրած։ Ունեն իրենց դարաշրջանին խիստ բնորոշ ուռուցիկ և ճնշմամբ արված զարդեր։ Խիստ բնորոշ են խեցեղենի ոլորտավոր զարդերն ու փոքրիկ բոլորակ ունկերը, որ ծառայել են իբրև զարդ և գործնական նշանակություն չեն ունեցել։

Բնակչության զբաղմունքի վերաբերյալ նույնպես նյութեր շատ են գտնվել. կավե մեծ անոթների մեջ և հատակին թափված վիճակում գտնվել են ցորենի և գարու տարբեր տեսակների հատիկներ և հասկեր, որ մոտ են տեղական վայրի տեսակներին։ Մեծ քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասունների, ինչպես նաև շան ոսկորներ են ի հայտ եկել։ Գտնվել են նաև վայրի կենդանիների և ձկների ոսկորներ։ Այդ բոլոր գյուտերը ցույց են տալիս, որ Շենգավիթի պղնձեդարյան բնակիչները զբաղվել են նախնական երկրագործությամբ, տանը պահել են անասուններ, և որսն ու ձկնորսությունը ևս պակաս դեր չեն խաղացել նրանց տնտեսության մեջ։ Այդ բանի ապացույց են ձկնորսական կարթերը, որ պատրաստված են պղնձից, և սրածայր տեգերն ու նետասլաքները։

Շենգավիթի պեղումները կարևոր էին մի այլ տեսակետով ևս. մի ժամանակ հնագետներն այն կարծիքին էին, որ նույնիսկ առաջին հազարամյակում Հայաստանն իր մետաղը չուներ, ստանում էր այլ երկրներից։ Այդ տեսակետը հերքվեց վերջնականապես, երբ Հայաստանում բրոնզեդարյան կացիններ ձուլելու կաղապարներ գտնվեցին (Լենինական, Կարմիր բլուր)։ Ամենահինը պղնձեդարյան տափակ կացին ձուլելու կաղապարն է, որ գտնվեց Շենգավիթում[7]։

Շենգավիթի պեղումները վերսկսվեցին 1958 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից և այժմ շարունակվում են Երևանի պետական համալսարանի ուժերով։ Պեղումները ղեկավարում է հնագետ Սանդրո Սարդարյանը։ Պեղումները տալիս են նոր նյութեր։ Վերջին տարիներում Շենգավիթի հնավայրը 6 հեկտար տարածությամբ բարեկարգված է, ամբողջը փակ հնագիտական շրջան է հայտարարված և տեղում կառուցվել է թանգարան[8]։

Դ. ԲՐՈՆԶԵԴԱՐ

Բրոնզեդարը Հայաստանում ընդգրկել է մեր դարաշրջանից առաջ երկրորդ հազարամյակն ամբողջությամբ, սկզբից մինչև վերջ։ Ունի բազմաթիվ օջախներ, որոնց մի մասն է միայն հետախուզված և մի քանի կետերում էլ կատարվել են ծրագրված պեղումներ։ Կարելի է որոշակիորեն ասել, որ այդ

---

[7] Е. А. Бацбуртян, Культовый очаг из раскопок Шенгавитского поселения в 1936—1937, ВДИ, 1938, № 4; Նաև Ե. Բայբուրդյան, Աշխատանքի գործիքները հին Հայաստանում, «Տեղեկագիր Պատմության և գրականության ինստիտուտի», 1938, № 1։ Նույնի՝ Последовательность древнейших культур Армении (ձեռագիր, հնագիտ. և ազգ. ինստիտուտում), Է. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967։

[8] 1958 թ. վերսկսված պեղումների արդյունքների մասին տե՛ս Ս. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 161—252։

դարաշրջանը ևս սովետական կարգերի օրով բավականին լավ է ուսումնասիրվել։ Այդ բնագավառի ճանաչված հնագետներն են Հ. Մնացականյանը, Հ. Մարտիրոսյանը, Թ. Խաչատրյանը և Ս. Նսայանը։

Բրոնզեդարի վաղ փուլը Հայաստանում սկսվել է գունազարդ կավանոթներով, որոնց կարմրավուն ֆոնի վրա սև գունազարդումներ՝ երկրաչափական զարդանախշեր և կենդանիների պատկերներ են։ Վաղուց հայտնի էր այդ մշակույթը Կարմիր վանքից (Նախճավան)։ Սովետական կարգերի օրով Հայաստանում այն ի հայտ եկավ Աղավնատան, Էլարի դամբարաններում, Մուխանաթ թափայում և շատ այլ տեղերում։ Այդ անոթները հայտնի են աշխարհագրական շատ լայն տարածության վրա, սկսած Միջին Ասիայից (Անաու) մինչև Միջերկրական ծովի ափերը։ Նրա տարածումն առաջներում կապում էին պաղթերի և տեղաշարժերի հետ, բայց հետզհետե այնքան շատ ու բազմազան օջախներ բացվեցին, որ այլևս հնարավոր չէր կապել մի որևէ ցեղախմբի հետ։ Այժմ միանգամայն պարզ է, որ այդ կուլտուրան առաջ է եկել և զարգացել մարդկային տարբեր ցեղերի համագործակցությամբ։ Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերը ևս գործոն մասնակցություն են ունեցել այդ վերին աստիճանի հետաքրքիր մշակույթի առաջացմանն ու զարգացմանը[9]։

Ինչ խոսք, որ բրոնզի հանդես գալու հետևանքով բրչային երկրագործությամբ պարապող անասնապահ և որսորդ ցեղերը կարողացան ավելի կատարյալ զենքեր ու գործիքներ ունենալ ամրակուռ բրոնզից, որը և զգալի կերպով առաջ մղեց նրանց տնտեսությունը։ Այդ ժամանակ Հայաստանի լեռնային անասնապահ ցեղերը ավելի առաջատար դարձան, նրանք բրոնզի հետ միասին սկսեցին ոսկու հանքահանությամբ ևս զբաղվել և իրենց արվեստն այնքան զարգացրին, որ այսօր բոլորին զարմացնում է, թե իրենց անկատար հնարավորություններով ինչպե՞ս են կարողացել այդքան նուրբ ու գեղեցիկ, զարդարուն իրեր պատրաստել։

Հարստանալու հետ միասին ցեղապետներն իրենց ավելի բարձր են դասել համայնքի մյուս անդամներից և իրենց ավելի մեծ հասույթ են վերցրել ընդհանուր եկամտից։ Այդ է պատճառը, որ Լճաշենի (Սևանի շրջան) և Արթիկի դամբարանադաշտերում ցեղապետների հարուստ դամբարանների կողքին կան աղքատիկ և փոքրադիր թաղումներ։

Հայաստանում այժմ բրոնզեդարյան երեք հնավայրերում կատարվում են ծրագրված կանոնավոր պեղումներ, որոնք անսահման հարուստ նյութ են տալիս այդ ժամանակաշրջանի (2-րդ հազարամյակ) պատմությանը։

Լճաշեն. Սևանի ջրերի իջեցման հետևանքով ցամաքած տարածության վրա ի հայտ եկան դամբարաններ, որոնք 1956 թվականից սկսած նախ Հայաստանի պատմության թանգարանի և 1959 թվականից էլ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանձնարարությամբ պեղում է Հ. Մնացականյանը։ Նա միաժամանակ պեղումներ է կատարում նույն դամբարանադաշտի մոտի բարձունքների վրա գտնվող ընդարձակ բերդշենում, որ դամբարանադաշտում թաղվածների բնակավայրն է եղել։ Բերդշենում ի հայտ եկած բնակելի տների ձևերը և կազմությունը ցույց են տալիս, որ հայկական գլխատան սաղմերը գալիս են շատ հնից։ Տներից մի քանիսն ունեցել են կամարավոր ցիկ-

9 Ն. Բայբուրդյան, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, «Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի», 1937, № 2։

լոպյան ծածկ և այդտեղի բնակիչներն իրենց տների օրինակով էլ կառուցել են դամբարանները։

Մետաղական խարամների գյուտն ապացույց է, որ այդտեղ հնոցներ են եղել բրոնզե իրեր ձուլելու համար։ Ոսկե նրբին իրերի բնազննական քննությունը պարզել է, որ նրանց մետաղի կազմությունը ճիշտ նույնն է, ինչ որ Ջոդի ոսկունը, որտեղ, ի միջի այլոց, պահպանվել են հանքահորերի հետքերը և գտնվել հին ժամանակների գործիքներ ու հարմարանք։

Լճաշենի բնակավայրում գտնված աղորիքները, սանդերը ցույց են տալիս, որ այստեղ զբաղվել են երկրագործությամբ, մանավանդ որ գտնվել են մանգաղի քարե սրածայր ներդիրներ։ Տնային անասունների մնացորդները դամբարաններում (եզների, ձիերի, կերակուրի մեջ գործածված ոչխարի, այծի, խոշոր եղջերավոր անասունների ոսկորները, ինչպես նաև կաթնատընտեսական ամանեղենը վկայում են զարգացած անասնապահության մասին։

Հետաքրքիրն այն է, որ այդ դամբարաններում, որոնք պատկանում են II հազարամյակի երկրորդ կեսին, ի հայտ են եկել երկու տասնյակ սայլեր, կառքեր և մարտակառքեր, որոնց լծված են եղել եզներ կամ ձիեր։

Խիստ ինքնատիպ (ոչ մի տեղ չհանդիպող) և գեղեցիկ են Լճաշենի կավանոթները. հայտնաբերված են սև, սպիտակ, կարմիր գույներով զարդարած և նախշած բազմաթիվ կավանոթներ, որոնք բրոնզեդարյան կավագործության գլուխգործոցներ են։

Գտնվել են բրոնզե բազմաթիվ զարդարուն զենքեր (սակր, սուսեր, նիզակ, նետասլաք, գուրզ) և զարդեր (բոժոժ, շղթա, կոճակ և այլն)։

Հետաքրքիր է, որ լճաշենցիք եղել են նաև գերազանց արձանագործներ. գտնվել են եղջերուի, թռչունների, ցլի, ինչպես նաև ռազմակառքի փոքրօրինակներ, բոլորն էլ բրոնզից պատրաստած։

Արթիկ. Արթիկտուֆի քարհանքերում ի հայտ եկան տուֆ քարի շերտի մեջ փորած դամբարաններ, որտեղ 1960 թվականից սկսած կանոնավոր ծրագրված պեղումներ են կատարվում հնագետ Թելման Խաչատրյանի ղեկավարությամբ։ Այստեղ ևս բրոնզեդարյան իրեր են ի հայտ գալիս արվեստի բազմաթիվ առարկաների հետ։ Դամբարանադաշտի հետ միասին պեղվում է մոտիկ կիկլոպյան բնակատեղին, որ հարուստ նյութ է տալիս։ Դամբարանադաշտը ուշ բրոնզեդարյան է (XIII—X դդ.)[10]։

Մեծամոր (Սև բլուր). Բրոնզեդարյան հնավայրերի մեջ յուրահատուկ տեղ է գրավում Մեծամորը, որտեղ 1965 թվականից սկսած ծրագրված պեղումներ են կատարում երկրաբան Կ. Մկրտչյանը և հնագետ Է. Խանզադյանը։ Այս բլուրը, որի վրա մերկ ժայռեր կան, բնակելի է եղել մ. թ. ա. III հազարամյակից սկսած մինչև մ. թ. ա. VIII դարը։ Այնուհետև նա կենդանացել է մեր դարաշրջանի XI—XIII դարերում։ Ինչպես հնագույն ամեն մի բնակավայր, իր շրջապատում ունեցել է պարիսպ և ներսում բնակելի տներից բացի պաշտամունքային կառուցվածքներ (մեհյան ատրուշանով, որ նվիրված է եղել երեք աստվածների)։ Այստեղ կան ժայռի մեջ փորած արտաքո կարգի հորեր, որոնք պեղողները կապում են մետաղների ձուլման հետ. և իրոք, տեղում գտնվել են մետաղական խարամ, արհեստանոցային կթխաններ՝ մետա-

---

[10] Պեղումների առաջին երկու տարիների արդյունքներին է նվիրված Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика (Ереван, 1963) գիրքը։

ղի նստվածքով և ձուլման կաղապարներ։ Պեղումները հարուստ նյութ են տրվել առավելապես արհեստների վերաբերյալ, ոչ միայն կապված մետաղների հետ, այլև արդուզարդի։ Գտնվել են ոսկրի մշակման, կաշեգործության, մանածագործության վերաբերյալ իրեր, գորգագործի կտատիչ։

Ժայռերի վրա կան նշանագրեր[11]։

Բրոնզեդարի պատմության վերաբերյալ նախասովետական շրջանի հատուկենտ տեղեկություններից հետո այսօր մենք բոլոր բնույթի հարցերի վերաբերյալ գրեթե սպառիչ պատասխան ունենք, թեև աշխատանքներն ավելի մեծ ծավալ են ստանալու առաջիկա տարիներին։

Այստեղ տեղին է մի քանի խոսք ասել ժայռապատկերների և ցիկլոպյան ամրոցների ուսումնասիրության վերաբերյալ։

Վերջին մի քանի տարիների ընթացքում արտակարգ աշխուժություն է նկատվում Հայաստանի ժայռապատկերների ուսումնասիրության գործում։ Հնագետների երկու տարբեր խմբեր զբաղվում են այդ գործով։

Հնագետ Գ. Կարախանյանը, Պ. Սաֆյանի հետ, սկսած 1966 թվականից ուսումնասիրում են Սյունիքի լեռների, ինչպես նաև Ազիզբեկովի և Եղեգնաձորի լեռնային ղանգվածների 5000-ից ավելի ժայռապատկերները Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանձնարարությամբ։

Այդ ժայռապատկերները մեծ մասամբ բովանդակում են կենդանիներ (այծեր, վիթեր, այծյամներ, եղջերուներ, վարազներ, վայրի ձիեր, ցուլեր, շներ, գայլեր, հովազներ, արջեր, առյուծներ և այլն), որոնց մեջ մարդիկ զինված նետ ու աղեղով, նիզակով, որսում են նրանց, իսկ որսկան շներն էլ օգնում են իրենց տերերին։ Հետաքրքիրն այն է, որ պատկերների մեջ կան նաև եղներով լծված երկանիվ և քառանիվ սայլեր[12]։

Ժայռապատկերներով զբաղվել է նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոմպլեքսային արշավախումբը 1967—1968 թթ. ընթացքում[13]։

Հնագետ Ս. Սարդարյանը ևս 1965 թ. ուսումնասիրել է Գեղամաղանի և Արագածի լանջերի ժայռապատկերները[14]։

Այդ ժայռապատկերներից հները կարող են հասնել մինչև 5000-ական թվականները մ. թ. ա., իսկ նորերը՝ մ. թ. ա. I հազարամյակ։ Դրանք արտացոլում են հին մարդու կյանքը՝ նախնական, բայց իրական պատկերների միջոցով։

Այս բնագավառի ուսումնասիրությունները դեռ նոր են սկսվել, գիտական անհրաժեշտ ամփոփումները կատարվելու են առաջիկայում։

---

11 Բրոնզեդարի և հետագայի վերաբերյալ ամփոփիչ տեղեկություններ է պարունակում А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа մենագրությունը, Երևան, 1964, նույնի՝ Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբանադաշտեր, Երևան, 1969։

12 Հնագետներ Գ. Կարախանյանը և Պ. Սաֆյանը միասին ստվար հատորով հրատարակել են իրենց աշխատությունը այդ ժայռապատկերների վերաբերյալ բազմաթիվ նմանահանություններով։

13 Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲՀ, 1969, № 3։

14 Հայաստանի ժայռապատկերների մասին առաջին դիտողությունը տե՛ս Միաբան (Գալուստ Տեր-Մկրտչյան), «Նստոց», դիտողություններ ուսուցչապետ Նիկ. Մառի մի նոր հրատարակության առթիվ, «Արարատ», 1893, Ը (առանձնատիպ)։

Գալուստ Տեր-Մկրտչյանն իր հոդվածում հիշատակում է, որ 1886 թ. «Արարատ» ամսագրի 11-րդ համարում Մեսրոպ եպս. Սմբատյանը իր հոդվածի վերջում տպել է Մաստարայում Մեսրոպ Գյոնջյանի արտանկարած մի պատկեր, որի վրա հինգ մեծ և մի փոքր այծ է պատկերված։

Հայաստանի կիկլոպյան ամրոցները, որ հնադույն բնակավայրերի մի տիպն են հանդիսանում, մանրակնին ուսումնասիրության չէին ենթարկվել։ 1964 թ. սկսած հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Գ. Միքայելյանը հետևողականորեն ուսումնասիրում է Հայաստանի ցիկլոպյան ամրոցները։ Միայն Սևանի ափերին նա ուսումնասիրել է 63 ամրոց, որոնցից հնադույնները III հազարամյակում են հիմնադրվել և հանդիսացել են բնակավայրերի հիմնական տեսակը և իրենց գոյությունը շարունակել են մինչև վաղ միջնադար։

Միքայելյանն այժմ ուսումնասիրում է Նոյեմբերյանի, Հրազդանի, Աբովյանի և Երևան քաղաքի մերձակայքի կիկլոպյան ամրոցները[15]։

Դ. ՈՒՐԱՐՏՈՒ

Մենք վաղ երկաթեդարի վրա կանգ չենք առնում, չնայած այն բանին, որ այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարված։ Հետաքրքրվողները կարող են կարևոր տեղեկություններ գտնել Հ. Մարտիրոսյանի արդեն հիշատակված աշխատության մեջ։ Այստեղ համառոտակի կխոսենք այն կարևոր աշխատանքների մասին, որ Սովետական Հայաստանում կատարվել է ուրարտագիտության բնագավառում։

Նախքան սովետական կարգերի հաստատումը ուրարտագիտության կենտրոնը Արևմտյան Եվրոպան էր և շատ քիչ բան էր հայտնի Ուրարտուի պատմության և մշակույթի մասին։

Սովետական կարգերի օրով ոչ միայն ուրարտագիտության կենտրոնը տեղափոխվեց Սովետական Միություն և Հայաստան, այլև մեր հանրապետության սահմաններում ի հայտ եկան ուրարտական ռազմական և վարչական մի քանի խոշոր կենտրոններ, որոնց հնագիտական ուսումնասիրությունները բացահայտեցին պատմության և մշակույթի բազմաթիվ գաղտնիքներ։ Ուրարտական Թեյշեբաինի (Կարմիր բլուրի) ամրոցի համատարած պեղումները, ինչպես նաև Էրեբունու (Արին բերդ) պեղումները գրեթե իրենց ավարտին են հասել։

Այժմ ամենքին հայտնի է, որ Կարմիր բլուրի 1936 թ. սկսված պեղումները հսկայական նյութ են տվել մեր պատմությանը։ Բացվել է ամրոցային մեծ կառուցվածքի մի ամբողջ համալիր իր բոլոր մասերով, գտնվել են մանր ու խոշոր հարյուրավոր սեպագիր արձանագրություններ, որոնք բացի իրենց անմիջական բովանդակությունից, օժանդակել են ուրարտական լեզուն ուսումնասիրելուն, գտնվել են հազարավոր առարկաներ, որոնք ծառայում են իբրև հիմք հետազոտելու ուրարտացիների պատմությունը, մշակույթը, տնտեսությունը, արհեստները, արվեստը, նիստ ու կացը, նրանց կրած զենքերը, սան սարք ու կարգը և կյանքի շատ այլ կողմեր։

Ինչպես հայտնի է, Ուրարտուն հինարևելյան տիպի ստրկատիրական խոշոր պետություն է եղել և ռազմական, տնտեսական ու մշակութային փոխհարաբերությունների մեջ է գտնվել հարևան պետությունների հետ։ Այդ տեսակետից նրա մշակույթն ու պատմությունը սերտորեն կապված են Առաջավոր

15 Գ. Հ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, պր. I, Երևան, 1968։

Ասիայի այլ պետությունների հետ։ Նշանակում է, ուրարտական հնավայրերում կատարվող ուսումնասիրությունները ստանում են համընդհանուր արժեք։

Արին բերդի պեղումների շնորհիվ պարզվեց, որ Երևան քաղաքը ևս ուրարտական ծագում ունի, նույնիսկ բացահայտվեց հիմնադրման ճիշտ թվականը, որ և հիմք դարձավ 1968 թ. տոնելու մեր մայրաքաղաքի հիմնադրման 2750-ամյակը։

Այժմ սկսվել են նաև վաղուց հայտնի ուրարտական Արգիշտիխինիլի (Արմավիր) քաղաքի և Նոր Արմավիրի պեղումները երկու տարբեր արշավախմբերի կողմից։ Նոր Արմավիրի պեղումները ղեկավարում է Բ. Առաքելյանը (1970 թվականից՝ Գ. Տիրացյանը), Դավթի սարի (Արգիշտիխինիլի) պեղումները՝ Հ. Մարտիրոսյանը[16]։

Ուրարտագիտության զարգացման գործում մեծ աշխատանք են կատարել Բ. Պիոտրովսկին (Կարմիր բլուրի պեղումների ղեկավար), Կ. Հովհաննիսյանը (Էրեբունի ամրոցի պեղումների ղեկավար), Ն. Հարությունյանը (սեպագրագետ)[17]։

Ե. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Հայ ժողովրդի պատմության հին շրջանը ընդգրկում է մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. III դարը և հետաքրքիր է նրանով, որ մեր երկիրը հարաբերության մեջ է մտնում Հունաստանի, Հռոմի, մյուս կողմից՝ Պարսկաստանի և Ասորիքի հետ։ Ինչպես մեր ազգային մշակույթի պատկերը, այնպես էլ փոխազդեցությունների խնդիրները կարող են պարզվել միայն և միայն պեղումների օգնությամբ։ Նոր Արմավիրի, մասամբ նաև Էրեբունիի և Դվինի պեղումները որոշ նյութ են տալիս այդ ուղղությամբ, բայց դրանք իրականում երկրորդական նշանակություն ունեն, որովհետև բացի Նոր Արմավիրից մնացածները Հին Հայաստանի հնավայրերը չեն։

Այդ տեսակետից խիստ ուշագրավ էին 1931 թ. հին Վաղարշապատի պեղումները, որոնք չշարունակվեցին հաջորդ տարիներին, թեև արդյունքները գոհացուցիչ էին և հետագա տարիներին ավելի մեծ արդյունքներ կարող էին տալ[18]։

Մինչև այժմ Հին Հայաստանի հնավայրերից հատուկ պեղման է ենթարկվել Գառնիի ամրոցը, որ եղել է Արշակունի հայ թագավորների ամառանոցը[19]։ Այնտեղ գետնի երեսին պահպանված հեթանոսական տաճարը, պեղ-

---

[16] А. А. Мартиросян, Раскопки Аргиштихинили, КСИА, 1967, № 4.

[17] Б. Б. Пиотровский, Кармир-Блур, I (*1939—1949 թթ. արդյունքները*), Երևան, 1950, II (*1949 և 1950 թթ. արդյունքները*), Երևան, 1952, III (*1951—1953 թթ. արդյունքները*), IV (*հեղինակն է Կ. Լ. Հովհաննիսյանը*), Архитектура Тейшебаини, Երևան, 1955։ Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959; Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, *նույնի՝* Новые урартские надписи, Ереван, 1966, К. Л. Оганесян, Архитектура Эребуни, Ереван, 1961.

[18] *Աշխարհբեկ Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935։*

[19] Б. Н. Аракелян, Гарни, I (*1949—1950 թթ. պեղումների արդյունքները*), Երևան, 1951։ Гарни, II (*1951—1955 թթ. արդյունքները*), Երևան, 1957։ *Այդ նույն շարքի 3-րդ գիրքը գրված է հայերեն և ընդգրկում է միջնադարյան մնացորդները, հեղինակներն են Բ. Առաքելյանը և Գ. Կարախանյանը։ Չորրորդը վերաբերում է հնագույն շրջանի մնացորդներին։ հեղինակն է Է. Խանզադյանը։*

մամբ բացված բաղնիքը, տաճարի շինության հունարեն արձանագրությունը և ի հայտ եկած հազարավոր իրերը հարուստ նյութ են տալիս Հին Հայաստանի պատմության համար:

Հին Հայաստանի կենտրոններն են եղել Արմավիրը, Արտաշատը, Երվանդաշտը, Վաղարշապատը և այլն։ Առայժմ միայն Արմավիրում և Գառնիում են կատարվում ծրագրված պեղումներ։

Մի երկու տարի առաջ հողային աշխատանքների ժամանակ պատահաբար Հին Արտաշատ քաղաքի վայրում գտնվեց լատիներեն մի մեծ, հավանաբար զորանոցային արձանագրություն, որը և հիմք է ծառայելու այս տարի սկսվող պեղումների։

Զ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԸ

Միջնադարի ուսումնասիրության համար ևս, ինչպես ասացինք, հնագիտական պեղումներն ու մյուս աշխատանքները գրավոր աղբյուրների կողքին բացառիկ կարևոր նշանակություն ունեցան։

Նախասովետական շրջանում հայտնի էին միայն Անիի պեղածո նյութերը։ Քաղաքական անբարենպաստ դեպքերի հետևանքով առաջին համաշխարհային պատերազմի վերջին Անին մնաց Թուրքիային և պեղածո իրերի մեծագույն մասը ոչնչացավ։ Այդ պատճառով միջնադարի ուսումնասիրության համար պեղումների հենակետ դարձավ Դվինը, որ, ինչպես հայտնի է, Հայաստանի մայրաքաղաք դարձավ IV դարում և իր գոյությունը պահպանեց մինչև մոնղոլների ավերիչ արշավանքը XIII դարում։

Եթե Անին ունի բազմաթիվ մոնումենտալ հուշարձաններ, որոնք հայ ճարտարապետության փառքն են կազմում (պարիսպներ, կաթողիկե եկեղեցին, բոլորակ Ս. Գրիգորը, Պալոնաց պալատը, Հովվի եկեղեցին և շատ ու շատ այլ գլուխ գործոցներ), Դվինն էլ իր հերթին ունի այլ առավելություններ, որոնցից զուրկ է Անին։ Դվինն իր ընդերքում պահպանում է շատ ավելի երկար դարերի առաջնակարգ նշանակություն ունեցող առարկաներ (այն էլ մեծ մասամբ ամբողջական), քան Անին։

Անին տվել է միայն X—XIII դարերի նյութեր, իսկ Դվինը՝ IV դարից սկսած մինչև նույն՝ XIII դարի հարուստ ժողովածուներ։ Դեռ ավելին։ Պեղումները պարզեցին, որ քաղաք դառնալուց առաջ Դվինը եղել է մեծ բնակատեղի սկսած պղնձեդարից (III հազարամյակ մ. թ. ա.) և միջնաբերդի թանձր հողաշերտերի հսկայական բլուրի մեջ ունեցել է հեթանոսական շրջանի կանգուն և ավերակ վիճակում գտնվող մեհյաններ, ատրուշանի կրակարանի սրբազան տախտակով, որոնց վրա պատկերված են այն ժամանակվա աստվածությունները։

Թվում էր, թե Դվինի 1937 թ. սկսված պեղումները այլևս նորություններ չեն տալու, այլ պետք է կրկնություններ ու նույն առարկաների տարբերակներ տան, բայց պեղումներն ամեն տարի մի անակնկալ նորություն են հայտագործում։ Եթե միայն վերջին մի քանի տարիների պեղումները հաշվի առնենք, կտեսնենք, որ կրկնօրինակները իսպառ բացակայում են և արհեստավորների ձեռքի աշխատանքով պատրաստված իրերը ինչքան էլ նման լինեն միմյանց, միշտ տարբեր են և մի նոր բան պարունակում են իրենց մեջ։ Հազարավոր

օրինակներով հանդես եկող կավանոթները երբեք չեն կրկնվում։ Նույնիսկ դրոշմազարդ խեցանոթների մեջ չկա կրկնություն. դեռ մինչև օրս չի գտնված միևնույն դրոշմով դաջած ոչ մի կարաս։

1967 թ. վերջնականապես պարզվեց, որ ոսկեգույն, իրանական համարվող թանկարժեք հախճապակյա, ամենաբարձր որակի անոթները պատրաստվել են նաև Դվինում։ Ուսումնասիրությունը պարզում է, որ տեղականը թե՛ խեցու և թե՛ զարդաձևերի մեջ զգալի ինքնուրույնություն ունի։

1965 թ. քաղաքատեղի հարավ-արևմտյան կողմում բացվեցին բրուտի արհեստանոցի մնացորդներ, տասնյակ հազարավոր խոտանված առարկաներով, որոնց բոլոր նմուշները ցույց են տալիս, որ այդ տիպի առարկաներն արտադրվել են Դվինում։ Այդ արհեստանոցներում գտնվեցին նաև բրուտի հնոցի եռաթև և գլանաձև հարմարանքներ, որոնք օգտագործվել են հնոցի մեջ։

1969 թ. Հողաբերդ գյուղի մոտերքում (հին քաղաքի հյուսիսային մասում) բացվեցին բազմաթիվ արձանների բեկորներ (գլուխ, իրան), որոնք հեթանոս Հայաստանի սրբություններն ու պաշտամունքի առարկան են եղել։ Այդտեղ գտնվեց նաև պտղաբերության աստվածուհու արձանն իր սեռական հատկանիշներով։ Այդ արձաններն ու նրանց հետ գտնված բարձրաքանդակ քարերը բացառիկ նշանակություն ունեն հին Հայաստանի կրոնի և արվեստի պատմության համար։

1967 թ. Դվինի միջնաբերդի թաքստոցներից մեկում ի հայտ եկան հախճապակյա ներդիրներով ճատրակի (շախմատ) կենդանակերպ (առյուծ, ցուլ) խաղալիքներ։ Մինչ այդ ճատրակի խաղի գոյության մասին միջնադարյան Հայաստանում գաղափար չունեինք։

Այս տարի, թեև պեղումները դեռ չեն ավարտված, արդեն գտնվել են բազմաթիվ առարկաներ, որոնց թվում ատրուշանի սրբազան տախտակ, սրբությունների այլ պատկերացումով, քան նախորդ տարիներին գտնվածներն են։ Պեղվել են մեծ թվով դրամական դանձեր և բազմաթիվ այլ առարկաներ։

Դվինի պեղումները միջնադարի մեր մշակույթի և պատմության հարցերը լուսաբանող հարուստ նյութ են տալիս, այդ պատճառով էլ նրանք շարունակվելու են առաջիկա տարիներին։ Հայտնաբերված առարկաները և ճարտարապետական կառուցվածքներն ուսումնասիրվում են պեղումներին մասնակցող գիտական աշխատողների կողմից[20]։

Միջնադարի ուսումնասիրության համար կարևոր են ոչ միայն Հայաստանի մայրաքաղաքը, այլ նաև իշխանական ապարանքները, երկրորդական թագավորների քաղաքները և այլ տիպի բնակավայրերը։ Այդ պատճառով 1936 թ. հիմք դրվեց Պահլավունիների տոհմային ամրոցի՝ Ամբերդի պեղումներին, ակադ. Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ։ Այդ պեղումները երկար դադարից հետո, 1967 թ. վերսկսվեցին և շարունակվում են հնագետ Ս. Հարությունյանի կողմից։

---

20 Դվինի պեղումների վերաբերյալ լույս են տեսել՝ Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, հատ. 1-ին, Երևան, 1952, Վ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Արհեստները Հայաստանում, Երևան, 1956, Բ ա բ կ ե ն Ա ռ ա ք ե լ յ ա ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում, IX—XIII դարեր, հատ. I, Երևան, 1959, հատ. II, Երևան, 1964, Ա ր ա մ Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն, Դվինի նյութական մշակույթը IV—IX դարերում, Երևան, 1970։

Ամրոցի պեղումները շատ նյութ են տվել։ Հետաքրքիրն այն է, որ այդ պեղումների միջոցով պարզվում է նաև մի կարևոր խնդիր, թե հեռավոր իշխանական ամրոցներում և այլ բնակավայրերում տնտեսական ո՞ր կենտրոններից են ստացել իրենց գործածած առարկաները և իրենք տեղում ի՞նչ են պատրաստել։

1967 թ. Երևանի պետական համալսարանը պեղումներ է սկսել Լոռե ամրոցում, որ Բագրատունյաց մի ճյուղի՝ Կյուրիկյան թագավորության մայրաքաղաքն է եղել։ Այդ պեղումները հաջողությամբ կատարում է հնագետ Իգիթ Ղարիբյանը։ Արդեն հետաքրքիր տվյալներ են ստացվել միջնադարյան ամրոցի կազմության և ներքին կյանքի, ինչպես նաև տնտեսության, ճարտարապետության և արվեստի վերաբերյալ։

* * *

Ավարտելով մեր հոդվածը, պետք է նշենք, որ միայն սովետական կարգերի օրով հնագիտությունը Հայաստանում դարձավ լուրջ գիտություն։ Այսօր նա օժանդակում է պատմության պրոբլեմները լուծելուն և հաճախ ինքն է հարուցում նոր հարցեր և լուծում ինքնուրույն կերպով։

Հայաստանի հնագետները համագործակցելով Սովետական Միության մեծ ընտանիքի մյուս հանրապետությունների հնագետներին, առաջ են մղում հայրենական գիտությունը[21]։

АРХЕОЛОГИЧЕСКАЯ РАБОТА В АРМЕНИИ ЗА ГОДЫ СОВЕТСКОЙ ВЛАСТИ

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

До установления Советской власти археологические изыскания в Армении носили случайный характер, если не считать раскопок в Ани, проведенных под руководством акад. Н. Я. Марра.

Сразу после победы Советской власти в Армении создаются музеи, научно-исследовательские учреждения, открываются высшие учебные заведения, разрабатывается и осуществляется на деле план основных работ по изучению древнейших памятников культуры на территории республики.

Археологические исследования в Армении выявили наличие здесь каменного века, следов шельской культуры, многочисленные очаги культуры медно-бронзовой эпохи. Развернулись работы по изучению Урарту. Был найден ценный материал, изучение которого углубило научное знание о древнейшей, древней и средневековой истории Армении.

21 Զգալի աշխատանք է կատարվել վիմական արձանագրությունների ժողովածուները հրատարակելու, ճարտարապետական հուշարձանները պահպանելու, նորոգելու, բարեկարգելու և ուսումնասիրելու ուղղությամբ։ Վերջերս պեղման վայրերում մի շարք թանգարաններ հնադարաններ են կազմակերպվել, որոնց մասին այս հոդվածում հնարավորություն չունեցանք խոսել։

За истекшие годы большое внимание уделялось собиранию наскальных изображений, изучению циклопических крепостей, эпиграфическим исследованиям, металлообработке и хозяйственной деятельности в далеком прошлом.

Археология в Армении стоит на передовых рубежах научного прогресса и с большой энергией продолжает исследования по широкому комплексу проблем.